*Հաստատված է*
***գնման գործընթացի***
***գնահատող հանձնաժողովի***
***2014թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ***
*«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4»*

*ծածկագրով ընթացակարգի*

*շրջանակներում գրանցված մասնակիցներին*

# <<ՆՈՐԱԳԱՎԻԹ>> ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՓԲԸ

## Հ Ր Ա Վ Ե Ր

«ՊՈԼՆՈՐԱԳԱՎԻԹ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<ՆՈՐԱԳԱՎԻԹ>> պոլիկլինիկա ՓԲԸ-ի 2015թ-ի կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջն կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՊՈԼՆՈՐԱԳԱՎԻԹ-ՇՀԱՊՁԲ-11/4»:

Տեխնիկական բնութագրում ներկայացվում է սոց. անապահով և հատուկ խմբում ընդգրկված բնակչությանը անվճար տրամադրվող դեղորայքի և պոլիկլինիկայի կաբինետներում հիվանդների բուժման համար օգտագործվող դեղորայքի ցանկը: Մատակարարման պայմաններն են՝ ընկերության կողմից պատվերի առաքում, պատվերը ընդունելուց մինչև երկու օրվա ընթացքում: Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսերը:

Հայտնում ենք, որ գնման առարկաների վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Երևան, Նուազավիթ հասցեով, երկրորդ հարկ, ընդունարան մինչև **2014թ. դեկտեմբերի 15-ը, ժամը 13:15-ը, մինչև գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվելու պահը: Գնման առարկա է հանդիսանում <<ՆՈՐԱԳԱՎԻԹ>> պոլիկլինիկա ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերումը:**

ADAMYAN RUZANNA
6107590196

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N5)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N5.1):* Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՊՈԼՆՈՐԱԳԱՎԻԹ-ՇՀԱՊՁԲ-11/4»:

գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Հայտ պարունակող ծրարը ներկայացվում է փակ վիճակում,սոսնձված, ստորագրված և կնքված ներկայացնողի կողմից: Ծրարում ներկայացվող փաստաթղթերը կազմվում են մեկ բնօրինակից և երկու պատճեններից:

*Հարգանքով*

*<<ՆՈՐԱԳԱՎԻԹ>> պոլիկլինիկա ՓԲԸ-ի տնօրեն՝* *Ռ.Աղամյան*